ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հիմք ընդունելով 2023 թվականի օգոստոսի 31-ի, սեպտեմբերի 4-ի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի առաջատար մասնագետի ժ/պ Վարդան Խաչատրյանի զեկուցագրերը՝ ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 12000000(տասներկու միլիոն) ՀՀ դրամ տեղափոխել 06.6.1 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար,
2. 795000(յոթ հարյուր ինսունհինգ հազար) ՀՀ դրամ տեղափոխել 06.6.1 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ձեռքբերման համար,
3. 3674250(երեք միլիոն վեց հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ տեղափոխել 09.5.1 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի ֆուտբոլի դպրոցի ներքևի պատի ամրացման աշխատանքների համար:

Ավագանու որոշման նախագծով առաջարկվում է նաև ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից

4. 500000(հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել 01.1.1 ծրագիր 5122 հոդված աշխատակազմի կարիքների համար գրասենյակային ապրանքներ և սարքեր ձեռքբերելու համար:

Ինչպես նաև ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստայի ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից

5. 2108600(երկու միլիոն մեկ հարյուր ութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ տեղափոխել 01.3.3 ծրագիր 4232 հոդված, որից 632600(վեց հարյուր երեսուներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ <<Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն>> ՀԿ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակում գումարները վճարելու համար և 1476000 (մեկ միլիոն չորս հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ «E Community- Համայնքների եկամուտների կառավարման» էլեկտրոնային համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման համար:
6. 1500000(մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել 01.6.1 ծրագիր 4264 հոդված Սիսիան համայնքի բնակավայրերում առաջացած խնդիրների լուծման նպատակով դիզելային վառելիք ձեռքբերելու համար:

Ֆինանսատնտեսական բաժնի պետի ժ/պ **Դ. Այվազյան**

04.09.2023թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը չեն փոփոխվի:

Ֆինանսատնտեսական բաժնի պետի ժ/պ **Դ. Այվազյան**

04.09.2023թ.